



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք.Երևան

«01» Տեպրեբ 2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երևանի պետական համալսարանն՝ ի դեմս ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի, ով գործում է համալսարանի կանոնադրության համաձայն (այսուհետ՝ ԵՊՀ), Շուշիի տեխնոլոգիական համալսարանն՝ ի դեմս ռեկտոր Նվեր Միքայելյանի, ով գործում է համալսարանի կանոնադրության համաձայն, (այսուհետ՝ ՇՏՀ) համագործակցելու փոխադարձ ցանկությամբ կազմեցին սույն համաձայնագիրը:

1.2. Կողմերը համաձայն են կրթադաստիարակչական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ոլորտներում համատեղ, փոխշահավետ ծրագրերի մշակմանը և իրականացմանը, դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակմանը, համատեղ հայտարարությունների և փաստաթղթերի ստորագրմանը, տեղեկատվական և մարզամշակութային միջոցառումների իրականացմանը և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են պատրաստակամություն՝ կիրառելու իրենց հաստատություններում առկա մտավոր և նյութատեխնիկական ներուժը:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կողմերը պատրաստակամ են ապահովելու.

2.1. ՀՀ և ԱՀ բուհական համակարգերում իրականացվող փոփոխությունների, իրավական փաստաթղթերի, ակտերի և միջոցառումների մասին տեղեկությունների փոխանակում.

2.2. մասնագետների փոխադարձ մասնակցություն կողմերի կազմակերպած գիտաժողովներին, սեմինարներին, կոնֆերանսներին.



2.3. համալսարանների կառուցվածքային ստորաբաժանումների՝ ֆակուլտետների, ամբիոնների, գիտական և կրթական առանձին կենտրոնների համագործակցություն.

2.4. տարբեր միջոցառումների և ծրագրերի իրականացման ուղղությամբ ծավալուն և առարկայական համագործակցության դեպքում կողմերի միջև երկկողմանի պայմանագրերի կնքում, որոնցով կկարգավորվեն համապատասխան աշխատանքների իրականացումը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ԵՊՀ-ն.

3.1.1. ՇՏՀ-ին կտրամադրի իր կողմից մշակված ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, ուսումնական և գիտական գրականություն, հնարավորություն կընձեռնի ՇՏՀ-ի ուսանողներին և դասախոսներին օգտվելու ԵՊՀ գրադարանային ֆոնդից.

3.1.2. կաջակցի ՇՏՀ-ի մասնագետների ատենախոսությունների պաշտպանության և վերապատրաստման գործում.

3.1.3. կաջակցի կողմերի համապատասխան ամբիոնների փոխգործակցության կազմակերպման գործընթացներին.

3.1.4. կնպաստի ՇՏՀ-ում կրթության որակի բարելավմանը, պրոֆեսորադասախոսական կազմին կցուցաբերի մեթոդական աջակցություն.

3.1.5. կմասնակցի ուսանողական համատեղ գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների, մարզական սպարտակիադաների կազմակերպմանը.

3.1.6. իր հնարավորությունների սահմաններում կնպաստի բուհական կրթությանն առնչվող միջազգային միջոցառումներին (գիտաժողովներին, սեմինարներին, խորհրդակցություններին) ՇՏՀ-ի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ.

3.1.7. կաջակցի ՇՏՀ-ին՝ Բոլոնյան կրթական համակարգին ներգրավման ուղղությամբ.

3.1.8. ՇՏՀ-ի մասնագետների հետ, ըստ անհրաժեշտության, կմասնակցի ուսումնական և հետազոտական համատեղ մրցույթների, տարբեր ծրագրերի:



3.2.ՇՏՀ-ն.

3.2.1. պարբերաբար ԵՊՀ-ին կտրամադրի անհրաժեշտ տեղեկություն իր ուսումնական առաջնահերթ կարիքների և խնդիրների վերաբերյալ, կտեղեկացնի համալսարանում անցկացվող գիտահետազոտական աշխատանքների, սեմինարների, կոնֆերանսների, կլոր սեղանների, հանդիպում-քննարկումների մասին և կնպաստի ԵՊՀ ներկայացուցիչների մասնակցությանը դրանց.

3.2.2. կհամագործակցի ԵՊՀ-ի հետ ուսանողների և շրջանավարտների՝ աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու կարիերայի խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանն ուղղությամբ.

3.2.3. պարբերաբար կկազմակերպի «Հանրապետական միջբուհական աշխատանքի տոնավաճառ», կոնֆերանսներ, սեմինարներ, խորհրդակցություններ և այլ միջոցառումներ.

3.2.4. ԵՊՀ մասնագետներին կիրավիրի մասնակցելու ՇՏՀ-ի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներին:

4. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

4.1. Սույն համաձայնագրի դրույթների կատարումն ապահովելու համար Կողմերը լիազորում են մեկական ներկայացուցիչ: Կողմերի ներկայացուցիչները պարտավորվում են համատեղ կարգավորել ընթացիկ փոխգործակցության հարցերը, պատրաստել կատարած աշխատանքի մասին հաշվետվություններ կամ հաղորդումներ:

4.2. Կողմերը սույն համաձայնագրի շրջանակներում ֆինանսական պարտավորություններ չեն կրում:

5. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:



- 5.2. Սույն համաձայնագրի փոփոխություններն ու լրացումները կազմվում են լրացուցիչ համաձայնագրով և դառնում են սույն համաձայնագրի անքակտելի մասը:
- 5.3. Սույն համաձայնագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ ենթադրվող հրաժարումից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մյուս Կողմին գրավոր ծանուցելով:
- 5.4. Սույն համաձայնագրով չնախատեսված հարաբերությունների կարգավորման համար առաջնորդվել ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ:
- 5.5. Սույն համաձայնագիրը կազմված է իրավաբանական հավասար ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Երևանի պետական համալսարան
 ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
 հեռ.՝ (+374) 60 710000
 էլ. փոստ՝ info@ysu.am
 կայք՝ www.yasu.a

Շուշիի տեխնոլոգիական համալսարան
 ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Վաղարշյան 7
 հեռ.՝ (+374) 97 203080
 էլ. փոստ՝ info@shushitech.am
 կայք՝ www.shushitech.am

Ռեկտոր՝
Հովհաննես Հովհաննիսյան



Ռեկտոր՝
Նվեր Միքայելյան



Կտորագրություն